# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 806-Ա « 27 » հունիսի 2024թ.

## «ԿԱՌԼԵՆ ԵՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N 4167-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2024 թվականի հուլիսի 2-ից մինչև հուլիսի 26-ը ներառյալ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ում իրականացնել 2021-2023 թվականների ֆինանսական աուդիտ:

2. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Ս.Թունյանին (խմբի ղեկավար), Ս.Հարությունյանին և առաջատար մասնագետի ժ/պ Վ.Դանիելյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանա-տվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ